



Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդակալ

«Դուք եք Իմ ձեռքերը»

Որպես մեր Վարդապետ՝ Հիսուս Քրիստոսի աշակերտներ, մենք կանչված ենք աջակցելու և բժշկելու, և ոչ թե դատասպարտելու:

Մի պատմություն կա այն մասին, ինչպես էր Երկրորդ Համաշխարհային պատերազմին մի քաղաքի ռաբակոմման ժամանակ մեծապես վնասվել Հիսուս Քրիստոսի արձանը: Երբ քաղաքի մարդիկ գտան արձանը քարերի կույտի մեջ, նրանք վշտացան, որովհետև դա իրենց հավատքի և իրենց կյանքում Աստծո ներկայության սիրելի խորհրդանիշն էր:

Մասնագետ վարպետները կարողացան վերականգնել արձանը, սակայն նրա ձեռքերն այնքան շատ էին վնասվել, որ հնարավոր չեղավ ձեռքերը վերականգնել: Ուսանք առաջարկեցին քանդակագործ վարձել, որը նոր ձեռքեր կքանդակեր, սակայն մյուսները ցանկացան թողնել դա ինչպես կա, որպես պատերազմի ողբերգության մշտական հիշեցում: Ի վերջո, արձանը մնաց առանց ձեռքերի: Ինչևէ, քաղաքի մարդիկ Հիսուս Քրիստոսի արձանի պատվանդանին մի հուշագիր ավելացրեցին հետևյալ խոսքերով.
«Դուք եք իմ ձեռքերը»:

Մենք Քրիստոսի ձեռքերն ենք

Խորիմաստ դաս է պարունակում այս պատմությունը: Երբ մտածում ենք Փրկչի մասին, հաճախ պատկերացնում ենք Նրան ձեռքերը

մեկնած՝ հասնելու սփոփելու, բժշկելու, օրհնելու և սիրելու համար: Եվ Նա միշտ *բարեխաճորեն* էր խոսում մարդկանց հետ: Նա սիրում էր խոնարհներին և հեզերին, Նա քայլում էր նրանց մեջ, ծառայելով նրանց և հույս ու փրկություն բերելով:

Այդպես Նա ապրեց Իր մահկանացու կյանքը, այդպես կվարվեր Նա, եթե մեր մեջ ապրեր այսօր, այդպես մենք պետք է ապրենք որպես Նրա աշակերտներ և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ:

Չատկի այս սքանչելի առավոտյան, մեր մտքերն ու սրտերը ուղված են դեպի Նա՝ Իսրայելի Հույսը և Աշխարհի Լույսը:



Ընդօրինակելով Նրա կատարյալ օրինակը, մեր ձեռքերը կարող են դառնալ Նրա ձեռքերը, մեր աչքերը՝ Նրա աչքերը, մեր սիրտը՝ Նրա սիրտը:

Մեր ձեռքերը կարող են գրկել

Ես խորապես տպավորված եմ տեսնելով ինչպես են մեր Եկեղեցու անդամները հասնում մյուսներին: Լսելով ձեր անձնուրաց գոհաբերության և անհամար կարեկցանքի մասին, մեր սրտերը լցվում են նրախտագիտությամբ և երջանկությամբ: Դուք պայծառ լույս եք այս աշխարհում և հայտնի եք ողջ աշխարհում ձեր մեծահոգությամբ ու կարեկցանքով:

Դժբախտաբար, երբեմն մենք մաս լսում ենք Եկեղեցու անդամների մասին, ովքեր հիասթափվում են, ապա հեռանում, չմասնակցելով մեր Եկեղեցու ժողովներին, որովհետև մտածում են, որ դա իրենց տեղը չէ:

Երբ ես փոքր տղա էի, Երկրորդ Համաշխարհայինին հաջորդող տարիներին Պերմանիան կործանված և ավերված էր: Շատերը քաղցած էին, հիվանդ և մահամերձ: Ես լավ եմ հիշում Սոլթ Լեյք Սիթիից Եկեղեցու սննդի և հագուստի մարդասիրական առաքումները: Առ այսօր, ես դեռևս հիշում եմ հագուստի հոտը և զգում եմ դեղձի պահածոների քաղցր համը:

Կային մարդիկ, որ միացան Եկեղեցուն այն ապրանքների համար, որ ստանում էին այդ ժամանակ: Որոշ անդամներ արհամարանքով էին նայում այդ նորադարձներին: Նրանց անգամ անվանում էին *Büchsen Mormonen* կամ «Պահածո-Սորմոններ»: Նրանք վիրավորում էին այդ նոր անդամներին, քանի որ հավատում էին, որ նրանք կհեռանան, երբ այլևս նյութական կարիքներ չունենան:

Եթե մի քանիսը հեռացան, շատերը մնացին, նրանք գալիս էին եկեղեցի, ճաշակում ավտոարանի քաղցրությունը և զգում հոգացող եղբայրների և քույրերի քնքուշ գրկախառնությունը: Նրանք «տուն» հայտնագործեցին: Եվ այժմ, երեք-չորս սերունդ անց, Եկեղեցու շատ անդամ ընտանիքներ են սերվում այդ անդամներից:

Հուսով եմ, մենք ողջունում և սիրում ենք Աստծո բոլոր զավակներին, ներառյալ նրանց, ում հագուստը, տնաքը, լեզուն տարբեր է կամ պարզապես այլ կերպ են գործում: Լավ չէ, երբ ուրիշներին ցույց են տալիս, թե որքան անկատար են նրանք: Եկեք բարձրացնենք մնջ շուրջը գտնվողներին: Եկեք ողջունող ձեռք մեկնենք: Եկեք Եկեղեցու մեր եղբայրներին և քույրերին հատկապես մարդասիրաբար, կարեկցանքով և գթասրտորեն մոտենանք, որ նրանք վերջապես զգան, որ տուն են գտել:

Երբ գայթակղվում ենք դատապարտելու, եկեք մտածենք Փրկչի մասին, որը «սիրում է աշխարհը՝ այնքան, որ նա վայր է դնում իր սեփական կյանքը, որպեսզի կարողանա ձգել շողորմ մարդկանց իր մոտ:

... [Եվ] նա ասում է. Եկե՛ք ինձ մոտ, բոլո՛րդ, դուք աշխարհի ծայրն՛ր ... [քանզի] շողորմ մարդիկ արտոնյալ են մեկը մյուսի նման, և ոչ ոքի արգելված չէ»:¹

Կարդալով սուրբ գրությունները, պարզ է դառնում, որ Փրկչի խիստ հանդիմանությանը հաճախ արժանանում էին նրանք, ովքեր իրենց բարձր էին պահում իրենց հարստության, ազդեցության պատճառով, կամ համոզված էին իրենց արդարակեցության մեջ:

Մի առիթով Փրկիչը մի առակ ուսուցանեց նրկու մարդկանց մասին, ովքեր մտել էին տաճար աղոթելու: Նրանցից մեկը, լինելով հարզված Փարիսեցի, աղոթել էր. «Ով Աստուած, գոհանում եմ քեզանից, որ չեմ ինչպես ուրիշ մարդիկը՝ հափշտակող, անիրավ, շնացող, կամ ինչպես էլ այս մաքսավորը. Շաբաթը նրկու անգամ ծոմ եմ պահում, և իմ բոլոր ստացուածքներիցը տասանորդ եմ տալիս»:

Մյուս մարդը, ատենլի մաքսավորը, «հեռու կանգնած իր աչքերն էլ չէր կամենում դեպի նրկինքը բարձրացնել. այլ իր կուրծքը ծնծում էր և ասում. Ով Աստուած, ողորմիր ինձ մեղավորիս»:

Եվ Հիսուսն ասաց. «Ասում եմ ձեզ, թե սա արդարացած իջավ իր տունը քան թե նա»:²

Իրականում, «ամենքը մեղանչեցին, և Աստուծո փառքիցը պակասուած են»:³ Մենք բոլորս ողորմածության կարիք ունենք: Վերջին



օրը, երբ մենք կկանչվենք Աստծո դատարանի առջև, արդյո՞ք հույս ունենք, որ մեր բազմաթիվ անկատարությունները կներվեն: Արդյոք չե՞մք փափագում Փրկչի գրկախառնումը զգալ:

Ճշմարիտ և ճիշտ է, որ մենք մյուսների համար անենք այն, ինչը այնքան սրտանց փափագում ենք մենք:

Ես չեմ առաջարկում, որ մենք ընդունենք մեղքը կամ աչքաթող անենք չարին, մեր անձնական կյանքում կամ աշխարհում: Այնուամենայնիվ, մեր փութաջանության մեջ, մենք երբեմն խառնում ենք մեղքը մեղավորի հետ և շատ արագ դատապարտում առանց կարեկցանքի նշույլի իսկ: Մենք գիտենք ժամանակակից հայտնությունից, որ «հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում»:⁴ Մենք չենք կարող որոշել մեկ այլ հոգու արժեքը, ինչպես չենք

կարող չափել տիեզերքի մեծությունը: Ամեն մեկը, որին հանդիպում ենք, կարևոր անձ է մեր Երկնային Հոր համար: Գիտակցելով դա, մենք կսկսենք հասկանալ, թե ինչպես պետք է վերաբերվել մեր մերձավորներին:

Մի կին, որը տարիներ շարունակ եղել էր փորձության և վշտի մեջ, արցունքների միջից ասել է. «Ես հասկացա, որ նման եմ հին 20 դուլարանոցի, ճմրթված, մաշված, կեղտոտ, գործածված և սպիներով պատված: Սակայն ես դեռևս 20 դուլարանոց եմ, ես ինչ-որ բան արժեմ: Թեպետ ես լավ տեսք չունեմ, տրորվել եմ և գործածվել, սակայն դեռևս լիովին 20 դոլարի արժեք ունեմ»:

Մեր ձեռքերը կարող են սփոփել

Պահելով դա մեր մտքում, թող մեր սրտերն ու ձեռքերը կարեկցանքով հասնեն մյուսներին, քանզի ամեն ոք



քայլում է իր դժվարին ճանապարհով: Ռոպես մեր Վարդապետ Հիսուս Քրիստոսի աշակերտ, մենք կանչված ենք աջակցելու և բժշկելու, և ոչ թե դատապարտելու: Մեզ պատվիրվել է սզալ նրանց հետ, ովքեր սգում են, և սփոփել նրանց, ովքեր սփոփանքի կարոտ են:⁵

Մեզ՝ Քրիստոնյաներիս, համար վայել չէ մտածել, որ նրանք, ովքեր տառապում են, արժանի են իրենց տառապանքին: Չատկի Կիրակիին լավ օր է հիշելու, որ մեր Փրկիչը պատրաստակամորեն Իր վրա վերցրեց ցավը, հիվանդությունն ու տառապանքը մեր բոլորի, անգամ նրանց, ովքեր, թվում է, թե արժանի են իրենց տառապանքին:⁶

Առակաց գրքում մենք կարդում ենք, որ «ամեն ժամանակ սիրող է բարեկամը, երբ եղբայրը նեղ օրվան համար է ծնուած»:⁷ Եկեք սիրենք ամեն ժամանակ: Եվ եկեք հատկապես հասնենք մեր եղբայրներին և քույրերին իրենց նեղության ժամանակ:

Մեր ձեռքերը կարող են ծառայել

Հին հրեական առասպելը պատմում է նրկու եղբայրների՝ Աբրամի

և Ջիմրիի մասին: Նրանք դաշտ ունեին և միասին աշխատում էին այնտեղ: Նրանք համաձայնել էին հավասար կիսել աշխատանքն ու բերքը: Մի գիշեր, երբ բերքահավաքն ավարտին էր մոտենում, Ջիմրիին չէր կարողանում քնել, քանի որ նրա կարծիքով ճիշտ չէր, որ Աբրամը, որը կին և յոթ որդի ուներ կերակրելու, պետք է ստանար բերքի կեսը, մինչդեռ ինքը, միայնակ լինելով, այդքան շատ ուներ:

Այսպիսով, Ջիմրիին հազավ և դուրս եկավ դաշտ, իր հավաքած բերքի մեկ երրորդը վերցրեց և դրեց իր եղբոր բաժնի վրա: Այնուհետև բավարարված վերադարձավ քնելու, իմանալով, որ ճիշտ է վարվել:

Միևնույն ժամանակ, Աբրամը չէր կարողանում քնել: Նա մտածում էր իր խնդր եղբոր մասին, որը միայնակ էր, ոչ մի որդի չուներ աշխատանքում իրեն օգնող: Նրա կարծիքով, ճիշտ չէր, որ Ջիմրիին, որը տքնաջան աշխատում էր, պետք է բերքի միայն կեսը վերցնեիր: Անշուշտ, դա Աստծուն չէր գոհացնի: Աբրամն էլ կամացուկ գնաց դաշտ և իր բերքի մեկ երրորդը վերցնելով դրեց իր սիրելի եղբոր բաժնի վրա:

Հաջորդ առավոտ, եղբայրները գնացին դաշտ և երկուսն էլ զարմացան, տեսնելով, որ իրենց հավաքած բերքը միևնույն չափի էր: Այդ գիշեր եղբայրները գաղտագողի դուրս եկան իրենց տներից, որպեսզի նախորդ գիշերվա պես նույնը կրկնեն: Սակայն այս անգամ իրար հանդիպեցին, և, հանդիպելով միմյանց, նրանք գրկախառնվեցին և արտասովեցին: Նրանցից ոչ մեկը չէր կարողանում խոսել, նրանց սիրտը լի էր սիրով ու նրախտագիտությամբ:⁸

Դա է կարեկցանքի հոգին՝ որ մենք սիրենք մյուսներին, ինչպես մեզ,⁹ ցանկանանք նրանց նրջանկությունը, և այնպես վարվենք նրանց հետ, ինչպես կուզենայինք իրենք վարվելին մեզ հետ:¹⁰

ՀՃՄԱՐԻԻՍ ՍՆՐԸ ԳՈՐԾՆԵՐ Ե ԱՅԿԻՆՆԵՐ

ՃՄԱՐԻԻՍ ՍՆՐԸ ԳՈՐԾՈՎ Է ԱՐՏԱՀԱՅՈՒՎՈՒՄ: Մենք կարող ենք սիրո մասին ողջ օրը խոսել, դրան նվիրված գրություններ կամ պոեմներ

գրել, այն գովաբանող երգեր երգել և դա խրախուսող քարոզներ ասել, սակայն մինչև մենք գործով ցույց չտանք այդ սերը, մեր խոսքերը ոչ այլ ինչ են, քան «ձայն հանող պղինձ, կամ հնչեցող ծնծղայ»:¹¹

Քրիստոսը պարզապես չէր խոսում սիրո մասին, Նա ամեն օր ցույց էր տալիս դա Իր կյանքի ընթացքում: Նա Իրեն չէր առանձնացնում մարդկանց բազմությունից: Լինելով մարդկանց մեջ, Հիսուսը հասնում էր անհատներին: Նա փրկում էր կորածին: Նա պարզապես դասարանում չէր ուսուցանում մյուսներին սիրով հասնելու մասին, իսկ ապա իրական աշխատանքը հանձնարարում ուրիշներին: Նա ոչ միայն ուսուցանում էր, այլև ցույց էր տալիս, թե ինչպես պետք է «ստարել թույլերին, բարձրացնել ընկած ձեռքերը և ամրացնել տկար ծնկները»:¹²

Քրիստոսը գիտի, ինչպես պետք է կատարյալ ձևով ծառայել մյուսներին: Երբ Փրկիչը մեկնում է Իր ձեռքերը, նրանք, ում Նա դիպչում է, բարձրանում են և արդյունքում դառնում ավելի մեծ, ավելի ամուր և ավելի լավ մարդիկ:

Եթե մենք Նրա ձեռքերն են, արդյո՞ք նույնկերպ չպետք է վարվենք:

Մենք կարող ենք սիրել, ինչպես Նա

Փրկիչը կատարյալ առաջնահերթություններ է հայտնել մեր կյանքի, մեր տների, մեր ծխերի, մեր համայնքների և մեր ազգերի համար, երբ խոսել է սիրո մասին որպես մեծ պատվիրանի, որից «կախված են բոլոր օրենքը և մարգարեքը»:¹³ Մենք կարող ենք օրեր շարունակ համակվել, դիտարկելով կյանքի հրաշալի մանրամասները, օրենքը, կազմելով նրկար ցուցակ այն ամենի, ինչ պետք է անել, սակայն, եթե անտեսենք այդ մեծ պատվիրանները, մենք կկորցնենք հիմնական իմաստը և կմանավնենք առանց ջրի ամպերի, որոնք քշվում են քամուց, և առանց պտղի ծառերի:¹⁴

Առանց Հայր Աստծո և մեր մերձավորների հանդեպ այդ սիրո, մենք սոսկ Նրա Եկեղեցու ձևն ենք՝ առանց նյութի: Ի՞նչ օգուտ կա, երբ առանց սիրո ենք ուսուցանում: Ի՞նչ օգուտ ունի միսիոները, տաճարը կամ բարեգործական աշխատանքը առանց սիրո:

Մերն է ոգնշնչել մեր Երկնային Հորը ստեղծել մեր հոգիները, դա դրդեց մեր Փրկչին Գնթսնմանի այգում Ինքն Իրեն փրկագին տալ մեր մեղքերի համար: Մերը փրկության ծրագրի մեծագույն շարժիչ ուժն է, դա նրջանկության, բժշկության մշտապես նորացող աղբյուր է՝ հույսի թանկագին ակնաղբյուր:

Երբ մեկնում ենք մեր ձեռքերը և սիրտը դնպի մյուսները Քրիստոսանման սիրով, ինչ-որ հրաշալի բան է տեղի ունենում մեզ հետ: Մեր հոգիներն ապաքինվում են, զարգանում և ամրանում: Մենք ավելի նրջանիկ ենք դառնում, ավելի խաղաղ և ավելի ընկալունակ Սուրբ Հոգու հուշումների հանդեպ:

Իմ ողջ սրտով և հոգով ես շնորհակալություն եմ հայտնում մեր Երկնային Հորը մեր հանդեպ Իր սիրտ համար, Իր Որդու պարգևի համար, Հիսուս Քրիստոսի կյանքի, օրինակի և Նրա անմեղ ու անձնուրաց զոհաբերության համար: Ես բերկրանք եմ ապրում այն փաստով, որ Քրիստոսը չի մահացել, այլ բարձրացել է գերեզմանից: Նա ապրում է և երկիր է վերադարձել՝ վերականգնելու Իր իշխանությունը և ավետարանը մարդու համար: Նա մեզ համար եղել է կատարյալ օրինակ, թե ինչպիսի տղամարդիկ և կանայք մենք պետք է լինենք: Այս Չատկի կիրակի, և ամեն օր նրբակնածանքով և պատկառանքով խորհենք, թե ինչպես է մեր Փրկիչը գրկում, սփոփում ու բժշկում մեզ, եկեք պարտավորվենք դառնալ Նրա ձեռքերը, որպեսզի մեր միջոցով մյուսները զգան Նրա սիրալիր գրկախառնումը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 2 Նեփի 26.24, 25, 28; շնորհագրումն ավելացված է:
2. Տես Դուկաս ԺԷ.9-14:
3. Հռովմեացիս 4.23:
4. Վարդապետություն և Ուխտեր 18.10:
5. Սոսիա 18.9:
6. Տես Արմա 7.11-13; Վարդապետություն և Ուխտեր 19.16:
7. Առակաց ԺԷ.17
8. See Clarence Cook, "Abram and Zimri," in *Poems by Clarence Cook* (1902), 6-9.
9. Տես Մատթևոս ԻԲ.39:
10. Տես Մատթևոս Է.12:
11. Ա Կորնթացիս ԺԳ.1:
12. ՎեՌ 81.5
13. Մատթևոս ԻԲ.40
14. Տես Հուդա Ա.12:



Երնց Ռիչարդ Գ. Աքրթ
Տասներկու Առաքյալների Բվորումից

Ապրում է Նա, Փառք Նրա Անվան

Հիսուս Քրիստոսի Քավությունը հասկանալը և դրան հավատալը ուժ և ունակություն կարագնեն մեզ հաջողակ կյանքի համար:

Այսօր Չատկի առավոտ է, այս սուրբ օրը ողջ քրիստոնեական աշխարհը տոնում է Հիսուս Քրիստոսի հաղթանակը մահվան հանդեպ: Նրա Հարությունը քանդեց այն, ինչ այդ ժամանակ համարվում էր մահվան անկոտրում շղթա: Նա բացեց ուղին, որով երկրի վրա ծնված Երկնային Հոր զավակներից յուրաքանչյուրը հնարավորություն է ստանում մահից վեր բարձրանալ և կրկին ապրել:

Մեր Երկնային Հայրը, հավանաբար, հրճվում էր այդ սուրբ օրը, երբ Նրա լիովին հնազանդ, ամբողջովին արժանի Որդին փշրեց մահվան կապանքները: Ի՞նչ հավերժական նպատակ կունենար մեր Հոր նրջանկության ծրագիրը, եթե այն կյանքի չկոչվեր Նրա փառավոր և հնազանդ Որդու անսահման և հավերժական Քավության միջոցով: Ի՞նչ հավերժական նպատակ կունենար երկրագնդի Ստեղծումը, որտեղ բանական էակները հոգու հետ միասին մարմին պիտի ստանային, եթե մահը լինելու էր գոյության վերջնակետը և ոչ ոք հարություն չէր առնելու: Ինչպիսի փառավոր պահ էր այդ առավոտ բոլոր նրանց համար, ովքեր հասկանում էին դրա նշանակալիությունը:

Չատիկը այն սուրբ ժամանակն է, երբ ցանկացած նվիրյալ քրիստոնյայի սիրտը խոնարհ նրախտագիտությամբ դառնում է դնպի մեր սիրելի Փրկիչը: Դա այն ժամանակն է, որը պետք է խաղաղություն և ուրախություն բերի բոլոր նրանց, ովքեր սիրում են Նրան և ապացուցում են դա, պահելով Նրա պատվիրանները: Չատիկը բերում է մտքեր Հիսուսի, Նրա կյանքի, Նրա Քավության, Նրա Հարության, Նրա սիրտ մասին: Նա բարձրացավ մահից վեր՝ «իր թևերի մեջ ունենալով բժշկություն» (Մատթևոս 4.2; 3 Նեփի 25.2): Օ՛, որքան մենք բոլորս ունենք այդ ապաքինման կարիքը, որը կարող է տալ Քավիչը: Իմ ուղերձը հույսի ուղերձ է, հիմնված այն սկզբունքների վրա, որոնք մարմնավորված են Վարդապետ և Ուսուցիչ, Հիսուս Քրիստոսի ուսմունքներում:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները կարող են ավելի լիարժեք հասկանալ ապաքինման շունչը և խորությունը, որը տալիս է Նրա Քավությունը, որովհետև մենք ունենք Նրա վարդապետության լրիվությունը: Մենք հասկանում ենք, որ այն, ինչ Նա կամավոր արեց, անցնելով սաստիկ տառապանքների և զոհաբերության